

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա. Յ. Դալլաքյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հագուցային բառեր և արտահայտություններ. սոցիալական փորձ, տարրական դպրոց, գործունեություն, դաստիարակչական միջավայր, կառուցողական տարր, կազմակերպչական տարր, հաղորդակցական տարր, ինքնակրթություն, ուսուցչի կերպար:

Այսօր արագընթաց փոփոխություններ են տեղի ունենում հասարակության մեջ, որոնք ընդգրկում են ոչ միայն տնտեսական, քաղաքական ոլորտները, այլև գիտական: Դրանք պահանջ են դնում գիտության առջև փոփոխելու սոցիալական փորձը՝ համապատասխանեցնելով այն ժամանակակից կյանքի պահանջներին:

21-րդ դարում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերափոխվել է իր գերակայությունները՝ շեշտը դնելով «մարդկային գործոնի» և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք է դիտարկվում ազատ, կրթված, զարգացած անհատը, որն ընդունակ է ապրելու և ստեղծագործելու հարափոփոխ աշխարհում, մրցունակ լինելու, համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելու [1, էջ 9]: Իսկ այդպիսի անհատի ձևավորման հիմքը դրվում է դպրոցում: Ինչ խոսք, ընտանիքի դերակատարումն անչափ մեծ է այս պարագայում, սակայն դպրոցը համարվում

է այն անփոխարինելի օղակը, որին վերապահված է այդ կարևոր և պատասխանատու գործը:

Ժամանակակից կամ նորարարական մանկավարժությունը գնում է այդ ուղղությամբ. բացի առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից՝ նպատակ ունի նաև սովորողներին ապահովել բազմապիսի հասարակական հարաբերությունների մեջ՝ ձևավորելու նրանց որպես մարդու, անհատի և հասարակության լիարժեք անդամի:

Երեխայի անձի զարգացման գործում շատ կարևոր է ուսուցիչը, հատկապես՝ տարրական դասարանների ուսուցիչը, ով դնում է երեխայի զարգացման, հետագայում նաև ինքնադրսևորման գործի հիմնաքարը: Դա հնարավոր է միայն իրականացնել՝ պատրաստելով դպրոցում գործիմաց ուսուցիչներ, ովքեր ունեն հաղորդակցական բարձր մշակույթ, մասնագիտական կարողություններ և հմտություններ, մշտապես զբաղվում են ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ, կարողանում են ախտորոշել, կանխատեսել և նախագծել մանկավարժական գործընթացը: Մեր օրերում փոխվել է ժամանակակից ուսուցչի կերպարը՝ ստանալով նոր բնութագրիչներ: Դա պայմանավորված է կրթական համակարգում տեղի ունեցող շարունակական բա-

րեփոխումներով և նոր հարացույցի փոփոխությամբ, ինչն էլ ենթադրում է ուսուցչի նոր դերերի ստանձնում, որը կօգնի ապահովելու երեխայի սոցիալականացման գործընթացի արդյունավետությունը:

Ժամանակակից կրթական համակարգում առաջնահերթ խնդիր է նոր դարաշրջանի ուսուցչի կերպարի ստեղծումը: Ավանդական ուսուցիչը՝ որպես գիտելիքների փոխանցման ու մեկնաբանման մենաշնորհի ունեցող, իր տեղն է զիջում նոր ուսուցչին, որը հանդես է գալիս որպես՝

- հետազոտող ,
- ուղղորդող,
- աջակցող,
- կազմակերպիչ ,
- խորհրդատու:

Մանկավարժական կրթության կենտրոնում ուսուցչի անձի ձևավորումն է. բարձրակարգ կրթության, համամշակութային արժեքների, հոգևոր և բարոյական որակների կրողը, ով ընդունակ է երիտասարդներին սովորեցնելու և դաստիարակելու 21-րդ դարի պահանջներին համապատասխան[4, էջ 19]):

Հետևապես, 21-րդ դարի նոր ուսուցիչը պետք է կրի և փոխանցի համամարդկային այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ հումանանիզմը, անձնակենտրոնությունը, հանդուրժողականությունը, էկոլոգիական անվտանգությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, սոցիալական համերաշխությունը: Հատկություններ, որոնց շնորհիվ նա կկարողանա դաստիարակել երեխային, ձևավորել էկոլոգիական աշխարհայացք, հանդուրժողականություն, հավասարակշռություն և խաղաղասիրություն, հարգանք մարդու իրավունքների

նկատմամբ: Այս բոլոր արժեքները շատ կարևոր են անձի զարգացման և ձևավորման գործում, որովհետև 21-րդ դարի քաղաքացին պետք է կարողանա ինտեգրվել, ապրել և ստեղծագործել հասարակության մեջ, լինել մրցունակ, դիմակայել կյանքի մարտահրավերներին և ունենալ կայուն ձևավորված դիրքորոշումներ:

Փաստորեն, մանկավարժը դաստիարակչական գործընթացում իրականացնում է մի շարք կարևոր և պատասխանատու դերեր՝ դասավանդող, աջակցող, ուղղորդող, երեխայի իրավունքների պաշտպան, ավագ ընկեր, օգնող, խորհրդատու և այլն: Բազմագործոն դերերն ուսուցչին օգնում են արագ կողմնորոշվելու և համագործակցության շնորհիվ ձևավորելու երեխայի սեփական <<Ես>>-ը և նրա պատկանելիությունը կոնկրետ հասարակությանը: Համագործակցությունն ուսուցչի և երեխաների միջև ունի մեծ նշանակություն, քանի որ աջակցում է նրանց ֆիզիկական, սոցիալական, հուզական և ճանաչողական ոլորտների զարգացմանը: Արդյունավետ փոխազդեցության ընթացքում, մանկավարժը հենվելով երեխաների ուժեղ կողմերի վրա, խթանում է յուրաքանչյուր երեխայի ուսուցումը և զարգացումը: [6, էջ 6] Միևնույն ժամանակ ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը նպաստում է երեխայի ինքնավարությանը, ինքնահաստատմանը, ինքնաիրացմանը և առաջնորդմանը: Հետևապես ժամանակակից ուսուցչի կարևոր դերերից մեկը՝ <<համաձևավորողի>> դերն է, դրա գիտակցումն ու ընդունումը: Ուսուցչի և աշակերտների փոխազդեցությունը պետք է իրականացվի նրա և տարեկիցների միջև հաղորդակց-

ման ճանապարհով. նրանք իրենք համատեղ ուժերով պետք է մասնակցեն գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացին, ինչը կնպաստի, որ աշակերտները դառնան ավելի ինքնավստահ, ինքնուրույն, հասարակության հոգատար և սրտացավ անդամներ:

Հասկանալու համար ժամանակակից ուսուցչի բազմագործոն դերերը, որով պայմանավորված է մանկավարժական գործունեության էությունը և նրա կառուցվածքը, փորձենք անդրադառնալ դրան:

Ներկայումս տարրական դպրոցի ուսուցչի գործունեությունը դիտարկվում է որպես համակարգված և կազմակերպված, ամբողջության մեջ միավորված, համագործակցող մարդկանց գաղափարների և միջոցների միավորում, որոնք ծնունդ են մանկավարժական գործընթացը և ապահովում նախապես պլանավորված արդյունքը:

Որպեսզի հասկանանք տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության էությունը, անհրաժեշտ է վերլուծել նրա կառուցվածքը, որն իրենից ներկայացնում է նպատակների, շարժառիթների, գործողությունների և արդյունքի միասնություն: Այսպես, օրինակ, գործունեության համակարգաստեղծ բնութագիրը, այդ թվում՝ մանկավարժական նպատակը/ Ա. Ն. Լեոնտև/:

Մանկավարժական գործունեության նպատակը պատմական բնույթ ունի: Այն մշակվում և ձևավորվում է որպես սոցիալական զարգացման հեռանկարների արտացոլում՝ ժամանակակից մարդուն ներկայացնելով պահանջների համակարգը՝ հաշվի առնելով նրա հոգևոր և բնական հնարավորությունները: Ներառվում է մի կողմից՝ տարբեր սոցիալական և

էթնիկական խմբերի հետաքրքրություններն ու սպասումները, մյուս կողմից՝ յուրաքանչյուր անձի պահանջներն ու ձգտումները:

Որպես մանկավարժական գործունեության նպատակի հիմնական օբյեկտ մասնագետներն առանձնացնում են դաստիարակչական միջավայրը, դաստիարակվողների գործունեությունը, դաստիարակչական կոլեկտիվը և դաստիարակվողի անհատական առանձնահատկությունները:

Գաղտնիք չէ, որ ավանդաբար տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության հիմնական տեսակներն են համարվել դասավանդումն ու դաստիարակչական աշխատանքը:

Դաստիարակչական աշխատանքը մանկավարժական գործունեություն է, որն ուղղված է դաստիարակչական միջավայրի կազմակերպմանն ու դաստիարակվողի տարաբնույթ գործունեության տեսակների կառավարմանը: Իսկ դասավանդումը դաստիարակչական գործունեության այնպիսի տեսակ է, որն ուղղված է աշակերտների, հիմնականում, իմացական գործունեության կառավարմանը:

Այսօր մի շարք տեսաբաններ, օրինակ՝ Վ. Ա. Սլաստենինը, առանձնացնում է մանկավարժական գործունեության 3 փոխկապված տարրեր՝ **կառուցողական, կազմակերպչական և հաղորդակցական**: [5, էջ 22] Համապատասխանաբար մանկավարժական գործունեության այս երեք տեսակների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ են համապատասխան ընդունակություններ, որոնք կարտացոլվեն ուսուցչի կարողություններում:

Այսպես, **կառուցողական գործունեությունն** իր հերթին բաժանվում է

կառուցողական-բովանդակային/ ուսումնական նյութի ընտրություն, պլանավորում և մանկավարժական գործընթացի կառուցում/, **կառուցողական-օպերատիվ/**իր և աշակերտների գործողությունների պլանավորում/, **կառուցողական-նյութական** /մանկավարժական գործընթացի ուսումնամյութական բազայի նախագծում/ տարրերի:

Կազմակերպչական գործունեությունը ենթադրում է գործողությունների համակարգ, որն ուղղված է տարաբնույթ գործունեության տեսակների մեջ աշակերտների ներգրավմանը, կոլեկտիվի ստեղծմանը և միասնական գործունեության կազմակերպմանը:

Հաղորդակցական գործունեությունն ուղղված է դաստիարակվողների, մանկավարժների, հասարակության անդամների, ծնողների հետ ճիշտ, նպատակահարմար մանկավարժական հարաբերությունների ստեղծմանը:

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ նշված տարրերը կարող են հավասարազոր կերպով համարվել ցանկացած այլ գործունեության տարրեր, թեև դրանք չեն բացահայտում ամբողջովին մանկավարժական գործունեության բոլոր կողմերն ու բնագավառները:

Իսկ Ա. Ի. Շչերբակովը համարում է, որ կառուցողական, կազմակերպչական և հետազոտական տարրերը կամ գործառնություններն ընդհանուր-աշխատանքային են, այսինքն՝ կարող են արտահայտվել ցանկացած այլ գործունեության մեջ: Սակայն այն հստակեցնում է ուսուցչի գործառնությունը մանկավարժական գործընթացի իրականացման փուլում՝ ներկայացնելով տարրական դպրոցի ուսուցչի

մանկավարժական գործունեության կազմակերպչական տարրերը՝ որպես **տեղեկատվական, զարգացնող, կողմնորոշող և մոբիլիզացնող գործառնությունների ամբողջություն:** [7, էջ 329] Այստեղ առանձնակի ուշադրության է արժանի հետազոտական գործառնությունը, չնայած որ այն վերաբերում է ընդհանուր-աշխատանքայինին: Կառուցողական տարրը կարող է ներկայացվել որպես ներքին փոխկապվածություն ունեցող վերլուծական, իմացական և նախագծային գործառնություններ:

Փաստորեն բոլոր այս տարրերի իրականացումը ենթադրում է մանկավարժի կողմից հատուկ կարողությունների տիրապետում:

Մշակելով մանկավարժական գործունեության հիմնախնդիրը՝ Ն. Ո. Կուզմինան ուսուցչի գործունեության կառուցվածքի այս մոդելում առանձնացնում է 5 տարր.

1. իմացական, 2. նախագծային, 3. կառուցողական, 4. հաղորդակցական, 5. կազմակերպչական: [3, էջ 123]

1. Իմացական /գնոստիկ/տարրը վերաբերում է մանկավարժի գիտելիքների ոլորտին: Ըստ որում՝ խոսքը ոչ միայն իր առարկայի իմացության, այլ նաև մանկավարժական հաղորդակցման ոլորտի, աշակերտների հոգեբանական առանձնահատկությունների իմացության, ինքնագիտակցման /սեփական անձի և գործունեության/ մասին է:

2. Նախագծային տարրը ներառում է պատկերացումներ ուսուցման և դաստիարակության խնդիրների, ինչպես նաև դրանք լուծման ռազմավարության և միջոցների մասին:

3. Կառուցողական տարրը սեփական մանկավարժական գործունեության և աշակերտների ակտիվության

կառուցման առանձնահատկություններն են՝ մերձակա նպատակների հաշվառմամբ:

4.3. Կաղորդակցական տարրերը ուսուցչի կաղորդակցական գործունեության առանձնահատկություններն են, աշակերտների հետ համագործակցելու կարողությունը: Շեշտը դրվում է կաղորդակցման և մանկավարժական գործունեության արդյունավետ կապի վրա, որն ուղղված է դիդակտիկական/դաստիարակչական և կրթական/նպատակներին:

5.4. Գնահատման արժեքները սեփական գործունեությունը կազմակերպելու բնագավառում ուսուցչի կարողությունների համակարգն է, ինչպես նաև աշակերտների ակտիվությունը:

Ներկայացված տարրերը ոչ միայն փոխկապված են, այլ նաև որոշ չափով հատվում են:

Մանկավարժական գործունեության մեկ այլ կառուցվածք է առաջարկում Ը. Ի. Գինեցիմսկին: Նա առանձնացնում է 4 գործառնություններ՝ **ներկայացման, արագընթաց, շտկող, դիագնոստիկ:** [2, էջ 142]

1. Ներկայացման/պրեզենտատիվ/ տարրն ուսումնական նյութի բովանդակության ներկայացումն է աշակերտներին:

2. Ինտենսիվ /արագընթաց/ գործառնությունը ենթադրում է աշակերտների կողմից յուրացվող տեղեկատվության նկատմամբ հետաքրքրության առաջացում: Դրա իրականացումը պայմանավորված է հարցադրումների ներկայացմամբ, պատասխանների գնահատմամբ:

3. Շտկող գործառնությունը կապված է աշակերտների գործունեության արդյունքների համեմատման և շտկման

հետ:

4. Դիագնոստիկ գործառնություն ապահովում է հետադարձ կապը /մանկավարժական ռեֆլեքսիա/:

Մեր կարծիքով, տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական գործունեությունը պահանջում է հատուկ կրթություն, այսինքն՝ հատուկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգի յուրացում, որոնք անհրաժեշտ են մասնատեսված մասնագիտական գործառնությունների իրականացման համար:

Առանց մանկավարժական գործունեության դժվար է պատկերացնել հասարակության և առանձին մարդկանց զարգացումը: Մանկավարժական գործունեությունը կարելի է դիտարկել որպես մարդկային կեցության կարևորագույն պայման:

Ուսումնասիրելով և համեմատելով գիտամանկավարժական գրականության մեջ և պրակտիկայում եղած տարբեր գիտնականների և հետազոտողների մոտեցումները՝ ժամանակակից տարրական դպրոցի ուսուցչի կերպարի, նրա մանկավարժական գործունեության վերաբերյալ մենք եկանք այն եզրահանգման որ ժամանակակից տարրական դպրոցի ուսուցչի դերերը բազմազան են: Դրանց այսօր ներկայացվում են մի շարք պահանջներ, որոնցից էլ բխում են մանկավարժական գործունեության էությունը և կառուցվածքը: Այդ գործընթացն ունի հստակ կառուցվածք, պահանջում է հատուկ մասնագիտական պատրաստվածություն և ունի զարգացման արագընթաց միտումներ:

Տարբեր ժամանակաշրջաններում ուսուցչի մոդելը և նրա գործունեության տարրերը, պայմանավորված հասարակական պահանջներով տարբեր են եղել: Այսօր տարրական

դպրոցի ուսուցչի մանկավարժական գործունեության կառուցվածքը բոլորովին այլ բնույթ ունի՝ պայմանավորված այն կոմպետենցիաների ձևավորմամբ, առանց որոնց անհնարին

է այդ գործունեության արդյունավետ կազմակերպումը: Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները նրա գործունեության հիմքն են, որի արդյունքում պետք է ձևավորվի լիարժեք անհատ:

Գրականություն

1.Աստվածատրյան Մ. Գ., Ավագյան Մ. Հ., Թերզյան Գ. Հ., Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ,Երևան,2014, էջ9:

2. Бордовская Н. В., Пеан А .А. Педагогика.-СПБ, 2009, с.142.

3. Кузьмина Н.В. Профессиональная деятельность преподавателя и мастерства производственного обучения профтехучилища.-М.,1989, с.123.

4. Педагогическая Конституция Европы, 2009. www.argue.org

5. Сластенин В. А. и др. Педагогика.-М., 2002, с.22.

6.Тэнкерслей Д., Брайкович С., Хандзар С., Римкене Р., Сабалаяскене Р., Трикич З., Вонта Т. Практика внедрения принципов качественной педагогики ISSA. Пособие для педагогов. ISSA, 2010., с 6.

7. Щербаков А. И. О методологии и методике изучения психологии труда и личности учителя.Л.-197,с.329.

РЕЗЮМЕ

СОВРЕМЕННЫЙ УЧИТЕЛЬ НАЧАЛЬНЫХ КЛАССОВ И ЭЛЕМЕНТЫ ЕЕ ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

А.Г.Даллакян

преподаватель кафедры профессиональной и прикладной педагогики
Армянского государственного педагогического университета имени
Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье представлена модель современного учителя подходы исследователей и научных деятелей о сущности, структуре, содержании педагогической деятельности. Также рассмотрены некоторые концептуальные положения формирования общечеловеческих ценностей уча-

щихся основной школы. Проведен анализ структуры педагогической деятельности, его основных целей. Подчеркнута значимость педагогической деятельности не только в развитии личности, но и в развитии современного общества.

SUMMARY

MODERN PRIMARY SCHOOL TEACHER AND ELEMENTS OF ITS TEACHING ACTIVITIES

A.H.Dallaqyan

lecturer, at the Chair of Professional and Applied Pedagogy
Khacatur Abovyan Armenian State Pedagogical University,
candidate of pedagogical sciences

The current article presents a model of the modern teacher and the approaches of scientists and researchers about the essence, structure and the content of pedagogical activities. Moreover it covers some conceptual bases of the formation of

mankind values for the primary school learners. At the same time analysis of the structure of pedagogical activity and its main objectives was conducted. The role of pedagogical activity is not only underlined in the development of the personality, but also in the modern society.